ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 67-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով յուրաքանչյուր տարվա ավարտից հետո սահմանադրական դատարանի կողմից իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդում հրապարակելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի պահանջը,

նկատի ունենալով ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման վիճակի ուսումնասիրման ու ամփոփման կարեւորությունը դատարանի իրավական դիրքորոշումների ձեւավորման ու զարգացման, երկրում սահմանադրական օրինականության ամրապնդման հարցում,

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմում ձեւավորել մասնագիտական աշխատանքային խումբ՝ դատարանի որոշումների կատարման վիճակի շարունակական ուսումնասիրման ու համապատասխան եզրակացություններ ու առաջարկություններ նախապատրաստելու համար:

2. Խմբի կազմում ընդգրկել.

Անահիտ Մանասյանին – ՀՀ ՍԴ նախագահի խորհրդական /խմբի ղեկավար/,

Արմեն Ներսիսյանին – ՀՀ ՍԴ աշխատակազմի իրավախորհրդատվական ծառայության փորձագիտական-վերլուծական բաժնի վարիչ,

Սամվել Առաքելյանին - ՀՀ ՍԴ աշխատակազմի իրավախորհրդատվական ծառայության փորձագիտական-վերլուծական բաժնի գլխավոր մասնագետ,

Նելլի Առաքելյանին - ՀՀ ՍԴ աշխատակազմի իրավախորհրդատվական ծառայության փորձագիտական-վերլուծական բաժնի գլխավոր մասնագետ:

3. Հանձնարարել աշխատանքային խմբին՝ յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ի դրությամբ միջանկյալ հաղորդում նախապատրաստել տվյալ տարում սահմանադրական դատարանի որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, իսկ հաջորդ տարվա հունվարի 10-ին ներկայացնել վերջնական ամփոփ տարեկան հաղորդման նախագիծ:

4. Հանձնարարել սահմանադրական դատարանի անդամների օգնականներին՝ դատարանի անդամների կողմից որպես զեկուցող հանդես եկած գործերով սահմանադրական դատարանի որոշման կատարման վիճակի վերաբերյալ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 15-20-ը տեղեկատվություն ներկայացնել աշխատանքային խմբին՝ տարեկան հաղորդման նախագիծը նախապատրաստելիս հաշվի առնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

8 ապրիլի 2014 թվականի
ՍԴԱՈ-14